

տասխանէ. «Վանականը ամէն գիշեր կ'որոշէր առտու արթննալուն պէս երթալ, վայելել աշխարհիկ բարիքները, որոնցմէ այսքան ատեն ինքզինքին զրկած էր, սակայն այս երկրին վրայ իրեն տրուած քառասուն տարին ան ճիշդ գործածեց եւ բնաւ չխոտորեցաւ Աստուծոյ ճշմարիտ ճանապարհէն, մինչեւ կեանքի վերջին օրը չդժեց իր եւ Աստուծոյ միջեւ կնքած ուխտը եւ որեւէ վկայութիւն չկար, թէ ան պիտի հեռանար վանքէն: Նոյն է պարագան մեղաւորին: Ան իրեն տրուած քառասուն տարին չօգտագործեց իր փրկութեան համար եւ ամէն գիշեր կ'որոշէր, թէ առտու պիտի արթննար եւ վանք պիտի երթար, բայց ամէն առտու միտքը կը փոխէր՝ շարունակելով իր մեղաւոր կեանքը եւ որեւէ վկայութիւն չկար, թէ ան իր մեղաւոր կեանքէն Աստուծոյ պիտի դառնար»:

Սիրելիներ, կ'աղօթեմ, որ չետածգէք ձեր բարի եւ աստուածահաճոյ միտքերու գործադրումը, որովհետեւ միշտ չէ որ ունիք ձեր թուացեալ բաւարար ժամանակը եւ օր մը ձեր կամքէ անկախ պիտի հեռանաք այս աշխարհէն եւ պիտի կենաք Քրիստոսի Երկրորդ գալստեան՝ արդար դատաստանին առջեւ: Հետեւաբար, Գալստեան այս Կիրակիին եկէք միասնաբար աղօթենք առ Աստուած, որ Ան իր Երկրորդ գալստեան ժամանակ գթասիրտ գտնուի բոլորիս նկատմամբ, միեւնոյն ատեն եկէք մենք զմեզ հարցնենք. եթէ այսօր Քրիստոսի Առաջին գալստեան խորհուրդը կրող Գալստեան Կիրակիի փոխարէն ըլլար Քրիստոսի Երկրորդ գալստեան օրը մենք պատրաստ պիտի ըլլայի՞նք Անոր արդար դատաստանին, որուն վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս. ամէն:

ՄԵԾԵՐԸ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՁԻ ՄԱՍԻՆ

Գիտութիւնը Արարչի մտքի թարգմանութիւնն է մարդկային լեզուի:

ԱԳԱՍԻՍ ԺԱՆ ԼՈՒԻ

Աշխարհի լինելիութիւնը համոզիչ ապացոյցն է Աստուծոյ գոյութեան, ամենայն Արարողի եւ Նախաշղացողի:

ԱԳԱՍԻՍ ԺԱՆ ԼՈՒԻ

Ժամանակի եւ տարածութեան միասնութեան մէջ երեւան կու գան ոչ միայն միտքը, այլեւ մտայղացումը, ուժը, բանականութիւնը, վեհութիւնը, կանխատեսումն ապագայի, իմացութիւնն ու տեսլականը ամենայնի: Մէկ խօսքով՝ այս բոլոր որակներն ի լուր ամէնքի կ'աւետեն Աստուծոյ գոյութեան մասին, Որու առջեւ մարդը պէտք է խոնարհի, Որուն մարդը պէտք է սիրէ:

ԱԳԱՍԻՍ ԺԱՆ ԼՈՒԻ